ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 նոյեմբերի Շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

170
(2650)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՑԱԽԸ՝ ԱՆԿԼԱՎ ԴԱՌՆԱԼՈՒ ՌԻՍԿԻ ՏԱԿ

Հայաստանյան քաղաքական դաշտում վերջին շրջանում բավականին ակտիվ կերպով քննարկվում է հավանական այն սցենարը, որ Ադրբեջանը մի օր պարզապես կարող է փակել Հայաստանն Արցախին կապող միջանցքը, քանի որ այդպիսի շանտաժներ արվում են պարբերաբար: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քաղաքական իշխանության ներսում անհանգստացած են Փաշինյանի՝ օրերս Երեւանում կայացած ՀԱՊԿ գագաթնաժողովի ժամանակ արված այն հայտարարությունից, որ «մինչ օրս Լաչինի միջանցքն ամբողջությամբ չի գտնվում ռուսական խաղաղապահ զորախմբի վերահսկողության ներքո, եւ ադրբեջանական բանակը մի քանի դիրքեր է պահպանում Լաչինի միջանցքում»:

Հաշվի առնելով զուտ միայն այն հանգամանքը, որ Բերձորով անցնող միջանցքի փոխարեն Ադրբեջանը բոլորովին նոր՝ շատ ավելի նեղլիկ ճանապարհ է հրամցրել, բացի այդ՝ թեեւ ծածուկ ու անզեն աչքի համար աննկատ, բայց ադրբեջանական կողմը խախտում է 5 կմ երկայնքով բուֆերային գոտի պահպանելու նորմն ու իր զորամիավորումները տեղադրում, ապա ենթադրել կարելի է, որ Լաչինի միջանցքը փակելու գաղափարն Ադրբեջանը, այնուամենայնիվ, կարող է եւ իրագործել: Հավանական ու ողբերագական ելքեր ենթադրող այս սցենարը նաեւ Արցախում չեն բացառում: Արցախի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Դավիթ Բաբայանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց՝ Ադրբեջանն առհասարակ չի էլ թաքցնում իր ծավալապաշտական նկատառումները, իսկ վերեջերս սկսել է շատ ավելի շահարկել Հայաստանն Արցախին միացնող միջանցքի հարցը:

«Անընդհատ սուտ լուրեր է տարածում, իբրեւ թե Լաչինի միջանցքով զենք զինամթերք է գալիս, որն ընդհանրապես կապ չունի իրականության հետ: Հետեւաբար, ի դեմս Ադրբեջանի, մենք հարեւան ունենք, որն իսկապես ատելությամբ է լցված հայ ժողովրդի, Ացախի ու Հայաստանի նկատմամբ: Նա, իհարկե, տարբեր բաներ կարող է ձեռնարկել, բայց մենք էլ, բնականաբար, պետք է համապատասխան աշխատանք տանենք՝նրանց ահաբեկչական բնույթի քայլերն ու նպատակները չեզոքացնելու: Իսկ այդ աշխատանքները, առաջին հերթին, պետք է ռուս խաղաղապահների, Ռուսաստանի, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող մյուս երկու երկրների՝ԱՄՆի ու Ֆրանսիայի հետ տանենք»,- ընդգծեց Արցախի հանրապետության արտաքին գործերի նախարարը:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում դիրքային փոփոխություններ են տեղի ունենում: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերանայում է կուսակցության ներսում իր սիրելիների ու հավատարիմների ցանկը: «Նա այժմ առավել քան տեղ է տալիս իրեն հաճախակի քծնող, գովեստի խոսքեր ասող դեմքերին, տպավորություն է, թե ողջունում է հրապարակային քծնանքը: Կուսակցության՝վարչության անդամների ընտրությունից ու նոր վարչություն ձեւավորելուց հետո Փաշինյանը սկսել է Վահագն Ալեքսանյանին ու Գեւորգ Պապոյանին տեղ տալ: Նրանք, ըստ երեւույթին, ավելի հաճախ են «լայքում» կամ տարածում վարչապետի գրառումներն ու ավելի հաճախ են հայտարարում իրենց՝Փաշինյանին անվերապահ աջակցելու մասին»,- «Ժողովուրդ» օրաթերթին ասաց իշխանամերձ մեր աղբյուրը: Տեղեկացանք նաեւ, որ Փաշինյանի եւ վարչության նախկին նախագահ Սուրեն Պապիկյանի հարաբերություններն են տրանսֆորմացվել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝նոյեմբերի 22-ին տեղի ունեցած նորընտիր վարչության անդրանիկ նիստին Պապիկյանը ներկա չի եղել: Այդ օրը խոսվել է ՔՊ վարչության անդամների, տեղակալների, ոլորտների բաշխման մասին, ինչպես նաեւ կուսակցության վարչության կեղծված ընտրությունների մասին: Նիկոլ Փաշինյանը չի ներում այն, որ կեղծիքների լուրը հրապարակվել է, եւ մենք գրել ենք այդ մասին: Հիմա ներսում բոլորն իրար վրա են փորձում բարդել պատասխանատվությունը, եւ առնետարոս է սկսվել՝հասկանալու, թե ով է մեր աղբյուրը:



Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանը, ի տարբերություն իր գործընկերների, խորհրդարանական աշխատանքին չի վերադարձել: «Ժողովուրդ» օրաթերթը, հիշեցնենք, դեռ մեկ շաբաթ առաջ էր գրել, որ նա, հավանական է, վայր դնի պատգամավորական մանդատը: Սաղաթելյանի՝խորհրդարանը լքելու հանգամանքը իշխանությունների համար «ցանկալի արդյունքի հասնելու» նման մի բան է: Բանն այն է, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիրը», չբավարարվելով նրան խորհրդարանի փոխնախագահի աթոռից պաշտոնանկ անելուց, այժմ էլ ամեն գնով ուզում է նրա ձեռքից մանդատը վերցնել: Որպեսզի Սաղաթելյանը հնարավորինս անհարմարավետություն զգա խորհրդարանում, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ԱԺ ղեկավարությունը նիստերի դահլիճի՝«Հայաստան» խմբակցության համար նախատեսված շարքի ամենավերջում է տեղ տվել նրան: Սա ասես բավարար չէ, արդեն շարքային պատգամավոր Սաղաթելյանին իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության թեւում են աշխատասենյակ տրամադրել: Մի խոսքով, Նիկոլ Փաշինյանն անում է հնարավոր ու ամեն ինչ՝պառակտելու եւ փոփոխելու «Հայաստան» խմբակցության կազմը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազը փորձել է ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի որդուն կալանավորել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝հոկտեմբերի 25-ին ՀՀ վճռաբեկ դատարան է դիմել գլխավոր դատախազի տեղակալը եւ պահանջել, որ դատարանը Խաչատուրովի որդուն կալանավորի, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է նորանշանակ դատախազի տեղակալի բողոքը: Ինչպես հայտնի է, այս տարվա մայիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեն կալանավորեց Յուրի Խաչատուրովի որդուն, որը 2 ամիս անց՝կալանքի տակ մնալուց հետո՝հուլիսի 11-ին, դատարանի դահլիճից ազատ արձակվեց՝1 միլիոն դրամ գրավի դիմաց: Ներկայումս նրա գործով դատական նիստերը շարունակվում են: Հիշեցնենք, որ, ըստ նախաքննական մարմնի, 2022թ. մայիսի 17-ին՝ժամը 08.30-ի սահմաններում, անհնազանդության ակցիա իրականացնող մի խումբ քաղաքացիներ փակել էին Երեւան քաղաքի Կիեւյան փողոցի 15 հասցեի դիմացի երթեւեկելի հատվածը՝այդկերպ խոչընդոտելով այլ քաղաքացիների ազատ տեղաշարժը: Նշված վայրում ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության աշխատակիցները, իրականացնելով հասարակական կարգի պահպանություն, հորդորել էին ազատել փողոցի բանուկ հատվածը, սակայն անհնազանդության ակցիայի մասնակիցները չէին ենթարկվել ոստիկանության աշխատակիցների՝փողոցն ազատելու եւ երթեւեկությունը վերականգնելու օրինական պահանջներին, ինչի կապակցությամբ ակցիայի մասնակիցներից մի քանիսը բերման էին ենթարկվել: Այդ ընթացքում Իգոր Յուրիի Խաչատուրովը ակցիայի մեկ այլ մասնակցի հետ խոչընդոտել էր փողոցն ազատելու եւ անձանց բերման ենթարկելու ՀՀ ոստիկանության տեսուչի գործողություններին, նրա նկատմամբ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն էր գործադրել՝բռունցքով մի քանի անգամ հարվածելով նշված աշխատակցի կրծքավանդակի եւ որովայնի հատվածներին: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ Իգոր Խաչատուրովին մեղադրանք է առաջադրվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ոստիկանի օրինական պահանջները չկատարելը:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ՊԵՏՔ Է ԿԱՆԽԵԼ ԲԱՔՎԻ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բաքուն կեղծ մեղադրանքներ է ներկայացնում Հայաստանին, թե ղարաբաղյան Երևանը Լաչինի միջանցքը զինամթերքի տեղափոխման համար է օգտագործում: Այնինչ իրականությունն այն է, որ Ադրբեջանը, շինծու ու կեղծ հայտարարություններով, միջազգային հանրությանը ցանկանում է ներկայացնել, թե Հայաստանն Արցախին կարող միջանցքը մենք բոլորովին այլ նպատակների համար ենք ծառայեցնում: Իրականությունը սակայն այն է, որ ադրբեջանական կողմը, ըստ երևույթին, միջանցքը փակելու, և, հետևաբար, Արցախը հայաթափելու մտադրություն ունի: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի արտաքին գործերի նախարարի ղարաբաղյան գծով դեսպան Դավիթ Բաբայանի հետ:

-Պարոն Բաբայան, այս օրերին հայաստանյան քաղաքական դաշտում քննարկվում է այն հարցը, որ չի բացառվում՝ Ադրբեջանն առաջիկայում փակի Հայաստանի՝ Արցախին միացնող միջանցքը: Հետաքրքիր է՝ սրա հետ կապված՝ Արցախում ի՞նչ տրամադրություններ են:

-Ադրբեջանը ընդհանրապես չի էլ թաքցնում իր ծավալապաշտական նկրտումները, ու ձեր կողմից բարձրաձայնված հարցը վերջերս սկսել է էլ ավելի շատ շահարկել: Անամոթաբար ապատեղեկատվություն են տարածում, թե «Լաչինի միջանցք»-ով Հայաստան զենք-զինամթերք է տեղափոխվում, ինչն իրականության հետ առհասարակ կապ չունի: Ի դեմս Ադրբեջանի՝ մենք գործ ունենք մի երկիր հետ, որ ատելությամբ է լցված թե՛ հայ ժողովրդի, թե՛ Արցախի ու թե՛ Հայաստանի նկատմամբ: Կանխելու համար Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները՝ բոլորս պետք է աշխատենք, առաջին հերթին, ռուս խաղաղապահների, Ռուսաստանի, այնուհետ՝ ԵԱՀԿ անդամ մյուս երկրների՝ Ամերիկայի ու Ֆրանսիայի հետ: Բոլորս գիտենք, որ Ադրբեջանը միջազգային կառույցներում լուրջ վնասներ է կրում՝ կապված, օրինակ, Ֆրանսիայի սենատի ընդունած բանաձևի հետ: Եվ այդ ամենը հաշվի առնելով է պետք անել հնարավորը՝ կանխելու կամ չեզոքացնելու նրա կողմից հրահրվող ահաբեկչական քայլերն ու նպատակները:

-Իսկ ճի՞շտ է այն տեղեկատվությունը, որ վերջերս շահագործման հանձնված ճանապարհի երկայնքով անվտանգության համար նախատեսված 5 կմ բուֆերային գոտին չի պահպանվում: Այսինքն՝ ադրբեջանցիները խախտում են նաև այդ դրույթը:

-Տեղ-տեղ, բնական է, լինում են խախտումներ, եւ այդ խախտումները անցնում եւ Շուշիի մոտով, բայց դա պատերազմի հետեւանքն է: Իհարկե, այդ հարցը նույնպես լուրջ խնդիր է, իրենք էլ, օգտվելով դիրքային առավելությունից, երբեմն պրովոկացիաներ են իրականացնում:

-Ըստ Ձեզ՝ նման սցենար՝ միջանցքի փակում, թույլ չտալու համար Արցախը ի՞նչ քայլ կարող է անել, կամ ի՞նչ պետք է անի:

-Պետք է ճիշտ աշխատի՝ առանց ավելորդ էմոցիաների եւ PR-ի:

-Արցախի պետական ապարատի, երկրի կառավարման ներսում կատարվող փոփոխությունների մասով մեկ հարց. Արցախի՝ նոր-նոր պետնախարար նշանակված Ռուբեն Վրդանյանն իր կաբինետն է ձեւավորում, ու այս մասով կարծիքները տարբեր են՝ եւ դրական, եւ բացասական: Հիմնական թեզն այն է, որ եթե Վարդանյանը չհաջողի, դա կարող է կործանարար հետեւանքների բերել: Ձեր տեսակետն այս մասով ո՞րն է, եւ ըստ Ձեզ՝ այդ կործանարար հետեւանքը ինչը՞ կարող է լինել:

-Մենք պետք է անենք ամեն ինչ, որ լուրջ ձախողումներ չլինեն մեր պետականաշինության գործընթացում, եւ դա հատկապես գալիք մի քանի տարիների ընթացքում: Նախ ժամանակ չունենք, որ էքսպերիմենտներով զբաղվենք եւ այլն: Խոսքը, բնականաբար, միայն Վարդանյանի մասին չէ: Եվ եթե Արցախում ավելի անվտանգային, կանխատեսելի միջավայր լինի, ապա հուսով ենք՝ ռուս խաղաղապահները կմնան այստեղ անորոշ ու շատ երկար ժամանակով, ինչն էլ ավելի հուսալի ապագա կստեղծի մեզ՝ արցախահայությանս համար:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

ԱԼԻԵՎ-ՓԱՇԻՆՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՉԻ ԿԱՅԱՆԱ

Դեկտեմբերի 7-ին Բրյուսելում նախանշված Փաշինյան-Ալիեւ հերթական հանդիպումը կարող է տեղի չունենալ: Այս մասին ադրբեջանական լրատվամիջոցներն են հայտնում՝ հղում անելով երկրի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությանը:

Բաքվում ընթացող համաժողովի ընթացքում՝ հարեւան երկրի նախագահը մասնավորապես հայտարարել է. «Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ Բրյուսելում հանդիպումը դեկտեմբերի 7-ին պետք է տեղի ունենար: Սակայն երեկ իմ օգնական Հիքմեթ Հաջիեւը տեղեկացրել է, որ իր հետ կապ էին հաստատել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի գրասենյակից եւ հայտնել հետեւյալը՝ Հայաստանի վարչապետ Փաշինյանը համաձայնել է հանդիպել միայն այն դեպքում, եթե այդ հանդիպմանը նաեւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը մասնակցի»:

Իսկ դա, հավելել է Ալիեւը, նշանակում է, որ նախանշված հանդիպումը տեղի չի ունենա:

Փաշինյան-Ալիեւ վերջին հանդիպումը, հիշեցնենք, հոկտեմբերի 31-ին Սոչիում էր կայացել: Միջնորդ կողմը Ռուսաստանն էր՝ նախագահ Վլադիմիր Պուտինի գլխավորությամբ: Երեք երկրների ղեկավարները համատեղ հայտարարություն էին ընդունել, ըստ որի՝ կարեւորում էին խաղաղության պայմանագրի կնքման ակտիվ նախապատրաստման կարեւորությունը:

ՀՀ ԱԳՆ-ն արձագանքել է Իլհամ Ալիեւի հայտարարությանը, թե Փաշինյանի հետ նախատեսված հանդիպումը չի կայանա, քանի որ հայկական կողմը հանդիպմանը համաձայն է պայմանով, որ դրան մասնակցի նաեւ Ֆրանսիայի նախագահը:

«ՀՀ-ն պատրաստ է դեկտեմբերի 7-ի հանդիպմանը՝ Պրահայում ձեռք բերված պայմանավորվածության եւ ձեւաչափի համաձայն՝ այն տեղի է ունեցել քառակողմ ձեւաչափում, եւ տրամաբանական է, որ հանդիպման ձեւաչափը եւ մասնակիցների կազմը պիտի նույնը լինի:

Ադրբեջանական կողմի հայտարարությունները, թե հայկական կողմը փորձում է խաթարել հանդիպման անցկացումը եւ խաղաղության գործընթացն իրականության հետ որեւէ աղերս չունեն»,- նշում են նախարարությունից: Հիշեցնենք, որ ArmLur.am-ն ավելի վաղ գրել էր, որ դեկտեմբերի 7-ին Բրյուսելում նախանշված Փաշինյան-Ալիեւ հերթական հանդիպումը կարող է տեղի չունենալ:

Նյութերը՝ ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ

ԴԱՏԱՐԱՆԸ ԿԿԱՄԵՑՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վարչական դատարանը կկասեցնի ՀՀ ոստիկանության հայցը՝ ընդեմ 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների ծնողների: Մեզ հասած լուրերի համաձայն՝ դատական համակարգում ներքին մասնագիտական քննարկում է եղել, եւ որոշել են ոստիկանության հայցին անդրադառնալ քրեական վարույթով նախաքննության ավարտից հետո: Հիշեցնենք, որ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը, անդրադառնալով ոստիկանության կողմից սեպտեմբերի 21-ին Եռաբլուրում տեղի ունեցած միջադեպին եւ ոստիկանության կողմից զոհված զինծառայողների ծնողներին դատի տալու գործընթացին, նշել էր. «Անթույլատրելի է նաեւ այն հանգամանքը, որ տեղի ունեցած միեւնույն փաստական հանգամանքի վերաբերյալ նախաձեռնվում եւ իրականացվում է միաժամանակյա երկու գործընթաց՝ քրեաիրավական եւ վարչաիրավական այն պարագայում, որ այս երկու գործընթացները միմյանցից անկախ են, չեն կարող ունենալ քննության իրականացման միեւնույն հիմքը: Փոխանակ ոստիկանները պատժվեն ծնողներին նսեմացուցիչ կերպով գետնին տապալելու համար, դեռ մի բան էլ ոստիկանությունը ծնողներին է փորձում պատժել»: Հիշեցնենք՝ ArmLur.am-ը գրել էր, որ ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողների, եւ պահանջում է, որ դատարանը զոհված զինծառայողների ծնողներին վարչական պատասխանատվության ենթարկի, քանի որ ծնողները սեպտեմբերի 21-ին թույլ չէին տալիս ՀՀ վարչապետին եւ կառավարության անդամներին գնալ եւ ծաղիկ խոնարհել իրենց որդիների շիրիմներին: Արդյունքում ոստիկանները բռնության ենթարկեցին ծնողներին, ինչի առթիվ հարուցվել է քրեական վարույթ. 18 ծնող տուժող է ճանաչվել, սակայն մինչ օրս որեւէ մեղադրյալ չկա:

ՍՈՒՊԵՐՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՓԱՇԻՆՅԱՆԻ

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը սուպերվարչապետության նոր ռեկորդներ է ցանկանում սահմանել: Այսպես՝ կառավարության երեկվա՝ նոյեմբերի 24-ի նիստի ժամանակ կառավարությունը որոշել է, որ Պետական պահպանության ծառայությունը պետք է առանձնացվի ազգային անվտանգության ծառայությունից, ու այն վարչապետին ենթակա մարմին դառնա: Ինչ է ստացվում. ուժային այս կառույցի ղեկավարումն ու դրա տնօրինումը ոչ թե վերադաս ուժային մեկ այլ կառույց, այլ հենց վարչապետի աշխատակազմը պետք է իրականացնի: Փաշինյանի իշխանության ժամանակ, փաստորեն, նաեւ վարչապետի անվտանգությունն իրականացնող մարմինն անմիջապես վարչապետին է ենթարկվելու՝ ըստ երեւույթին նրա հրահանգներն ավելի օպերատիվ կատարելու, նրա անվտանգությունն՝էլ ավելի ապահով դարձնելու համար: Ընդդիմադիր ժամանակ Նիկոլ Փաշինյանը սակայն, հիշեցնենք, քարը քարին չթողնելով, քննադատում էր Սերժ Սարգսյանին, թե նա երկրի կառավարման ձեւը սուպերվարչապետության է վերածել՝ իր վերահսկողության տակ առնելով մի շարք գերատեսչություններ ու օղակներ: Բայց այսօր, փաստացի, Փաշինյանը ոչ միայն չի հրաժարվել իր իսկ կողմից անվանարկած «սուպերվարչապետության» թեզից, դեռ մի բան էլ, օր օրի ամրապնդում է այն:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՎ Է ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ

Լարսի անցակետը հատել փորձող որոշ բեռնատարներ, որ նոյեմբերի սկզբից Վրաստանի տարածքում են՝ Թբիլիսիի շրջանցիկ ճանապարհի մոտ, այս օրերին նոր միայն կարողացել են անցնել շրջանցիկ այդ ճանապարհը: Բայց, ցավոք, դրանից որեւէ բան չի փոխվել, ու դա չի էլ նշանակում, թե բեռնատարներն առաջիկա օրերին կամ շաբաթներին կարողանալու են հատել ռուս-վրացական սահմանը: ArmLur.am-ի հետ զրույցում այս պահին դեպի Լարսի անցակետ ճանապարհի մասին մանրամասներ է հայտնում Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը: Պատգամավոր Դանիելյանը զարմանում է՝ ինչպես կարելի էր առիթը չօգտագործել ու ՀԱՊԿ գագաթնաժողովի շրջանակներում Հայաստան այցելած ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հարցն առանձին չքննարկել: «Հայաստան» խմբակցության պատգամավորը շեշտում է՝ հարցը մոտ մեկ ամսից ավելի է, ինչ ամենատարբեր հարթակներում բարձրաձայնում է, բայց առ այսօր դրական որեւէ տեղաշարժ չկա: Մեր զրուցակիցն արձանագրում է՝ իրավիճակի հետ կապված՝ պարենային շուկայում արդեն իսկ թանկացումներ են նկատվում, արտահանող ընկերությունների մոտ՝ սնանկության դեպքեր: Տնտեսվարողները, հավելում է, աճեցրած ու ստացած բերքը ռեալիզացնել չեն կարողանում, ինչը գյուղատնտեսության ոլորտի իրական աղետներից է: Ընդհանուր առմամբ, նորից ընկերության տեղկացմամբ, հայկական բեռնատարների թիվն այս պահին ավելի քան 3.000-ի է հասնում:

ԱՆԳՈՐԾ ԿՄՆԱՆ

90 բուժաշխատողներ Ավանեսյանի որոշման արդյունքում կմնան անգործ: «Հիմնարկն ունի մոտ 100 աշխատող, բայց կարող է՝ 10-ը միայն աշխատեն, մնացածի ճակատագիրը անհայտ է: «Մեզ ծանուցել են, որ հիմնարկը հունվարի 1-ից տեղափոխվում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն՝ մի հարկում պիտի տեղավորվենք բոլորով: Ինչն է խնդիրը, որ մեզ՝ հասարակ աշխատողներիս, գործազուրկ են դարձնում». այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում վրդովված ասացին «Այրվածքաբանության ազգային կենտրոնի» մի խումբ բուժաշխատողներ: Հիշեցնենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, «ՀՀ Առողջապահության նախարարությունը 2022 թվականի ապրիլի 7-ի Կառավարության որոշման համաձայն՝ միաձուլվել են երկու անհամատեղելի կառույցներ՝ «Մաշկաբանության ազգային կենտրոն» եւ «Այրվածքաբանության ազգային կենտրոն»-ները՝ ստեղծելով ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության եւ մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել էր, որ ՀՀ Առողջապահության նախարարությունը որոշում է կայացրել Դավիթաշեն վարչական շրջանում գտնվող Այրվածքաբանության ազգային կենտրոնի տարածքը տրամադրել Պետական առողջապահության գործակալությանը (ՊԱԳ)-ին՝, որպեսզի նախարարի սրտի ֆինանսիստը՝ Ահարոն Բարսեղյանը, լավ պայմաններում աշխատի: Իսկ Այրվածքաբանության ազգային կենտրոնը նախատեսվում է տեղափոխել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ՝ տեղավորելով ընդամենը մի հարկում: Այս առնչությամբ Armlur.am-ը փորձեց մեկնաբանություն ստանալ նաեւ առողջապահության նախարարությունից.« Բանիմաց, փորձառու, խելացի, շարունակական զարգացման ծրագրերից օգտվող, վերապատրաստված մասնագետը համակարգից դուրս չի մնա: Կարծում եմ՝ սա հստակ պատասխան է: Բացի այդ, կշարունակի աշխատել լավ պայմաններում եւ կունենա զարգացման առաջընթացի հնարավորություն»: Հիշեցնենք, որ նախարար Ավանեսյանի սրտի ֆինանսիստը՝ ՊԱԳ ղեկավար Ահարոն Բարսեղյանը, ՊԱԳ է տեղափոխվել Ավանեսյանի մայրիկին պատկանող տարածքում գտնվող «Վիգմոր» կլինիկայի ֆինանսիստի հաստիքից: Իսկ նախարարն ամեն ինչ անում է՝ հրապարակավ ապացուցելու, թե «Վիգմոր» կլինիկայի հետ որեւէ առնչություն չունեն ընտանքով:

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ Է

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է

Վարչապետի աշխատակազմի ղեկավար, «Մանկական Եվրատեսիլ-2022» երգի մրցույթի նախապատրաստման և կազմակերպման հանձնաժողովի նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել վերոնշյալ հանձնաժողովի հերթական նիստը: Այս մասին տեղեկացնում է ՀՀ կառավարության կայքը: Քննարկվել են միջոցառումը բարձր մակարդակով անցկացնելուն ուղղված նախապատրաստական աշխատանքներն ու առաջիկա անելիքները, մանրամասներ են ներկայացվել արդեն իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Քննարկվել են միջոցառումը բարձր մակարդակով անցկացնելուն ուղղված նախապատրաստական աշխատանքներն ու առաջիկա անելիքները, մանրամասներ են ներկայացվել արդեն իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Նշվել է նաեւ, որ դեկտեմբերի 5-ին Հանրապետության հրապարակում տարբեր երկրներից ժամանած միջոցառման մասնակից երեխաները միասին կվառեն գլխավոր տոնածառի լույսերը, հրապարակում տեղի կունենա նաեւ տոնական միջոցառում եւ հրավառություն:

Վարչապետի աշխատակազմի ղեկավար, «Մանկական Եվրատեսիլ-2022» երգի մրցույթի նախապատրաստման եւ կազմակերպման հանձնաժողովի նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել վերոնշյալ հանձնաժողովի հերթական նիստը: Այս մասին տեղեկացնում է ՀՀ կառավարության կայքը: Քննարկվել են միջոցառումը բարձր մակարդակով անցկացնելուն ուղղված նախապատրաստական աշխատանքներն ու առաջիկա անելիքները, մանրամասներ են ներկայացվել արդեն իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ: Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանը ներկայացրել է Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, որտեղ դեկտեմբերի 11-ին անցկացվելու է «Մանկական Եվրատեսիլ-2022»-ը, իրականացված աշխատանքները: Նշվել է նաեւ, որ դեկտեմբերի 5-ին Հանրապետության հրապարակում տարբեր երկրներից ժամանած միջոցառման մասնակից երեխաները միասին կվառեն գլխավոր տոնածառի լույսերը, հրապարակում տեղի կունենա նաեւ տոնական միջոցառում եւ հրավառություն:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ Արայիկ Հարությունյանը կարեւորել է շահագրգիռ գերատեսչությունների հետեւողական աշխատանքը՝ միջազգային մրցույթը մեր երկրում լավագույնս անցկացնելու համար: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ հոկտեմբերի 28-ին գրել էր, որ «Մանկական Եվրատեսիլ» միջազգային մրցույթի կազմակերպման համար հատկացված ֆինանսական հատվածը վերահսկվելու է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի ու իր տեղակալ Բագրատ Բադալյանի կողմից: Խոսքը ԱՄՆ-ում մոտ 600.000 դոլարով տուն գնած Բագրատ Բադալյանի մասին է: Պարզվում է՝ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ֆինանսական հատվածի հետ կապված գրեթե 0 դերակատարություն ունի: Ի դեպ, այս մասին հարցում «Ժողովուրդ» օրաթերթն ուղարկել է նաեւ ՀՀ կառավարություն, որտեղից մեզ փոխանցել էին, որ մեր հարցումը վերահասցեագրել են պետական մյուս կառույցներին, որոնք քիչ թե շատ դերակատարություն ունեն այս մրցույթի անցկացման գործում: Ստացվում է՝ վարչապետի աշխատակազմի ղեկավարն այժմ նաեւ «Մանկական Եվրատեսիլ-2022» երգի մրցույթի նախապատրաստման եւ կազմակերպման հանձնաժողովի նախագահն է եւ զբաղվում է այդ աշխատանքներով: Եվ թերեւս կարող ենք ենթադրել, որ Արայիկ Հարությունյանը միաժամանակ ֆինանսական հատվածն էլ «աչքի տակ» է պահում: Ի դեպ, Արայիկ Հարությունյանը ArmLur.am-ի հետ զրույցում պաշտոնապես հերքել էր, որ որեւէ առնչություն ունի «Մանկական Եվրատեսիլ-2022»-ի մրցույթի հետ, բայց ստացվում է, որ պարոն Հարությունյանը ստել է մեզ, եւ նա ոչ միայն առնչություն ունի, այլեւ «Մանկական Եվրատեսիլ-2022» երգի մրցույթի նախապատրաստման եւ կազմակերպման հանձնաժողովի նախագահն է:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԴՐԵՑ

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդեւանյանը վայր է դնում մանդատը. այս մասին նա հայտնեց սոցցանցի իր էջում՝ գրառում կատարելով. «Այսօր ներկայացնելու եմ պատգամավորի մանդատից հրաժարվելու իմ դիմումը: Այս մասին պարզ ու անկեղծ քննարկում եմ ունեցել գործընկերներիս հետ: Սա իմ անձնական որոշումն է՝ հարգելով, իհարկե, գործընկերներիս քայլերն ու գործողությունները: Ուժերիս ներածին չափ աջակցելու եմ պատգամավոր ընկերներիս եւ մեր գործընկերներին»: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս նոյեմբերի 22-ին գրել էր, որ «Հայաստան» խմբակցության մի խումբ պատգամավորներ իրենց մանդատները վայր են դնելու, այդ թվում՝ Արամ Վարդեւանյանը:

ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում ՀՀ ԱԳ նախարարությունը, ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի հետ համագործակցությամբ, նոյեմբերի 27-ից 29-ը կազմակերպում է «Հայաստան-Հնդկաստան. հազարամյա հարաբերությունների նոր խթաններ» խորագրով առաջին միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովը ներառելու է չորս թեմատիկ հարթակներ.

1) «Պատմական կապեր. Դարերի երկարատեւ փոխագործակցություն»

2) «Հայաստանն ու Հնդկաստանը գլոբալ եւ տարածաշրջանային զարգացումների շրջանակներում»

3) «Ճկուն բարեկամություն փոփոխվող աշխարհաքաղաքականության մեջ. Հայաստան-Հնդկաստան երկկողմ հարաբերություններ»

4) «Բազմաչափ երկկողմանի համագործակցության հեռանկարներ»:

Միջոցառման բանախոսներն են լինելու ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը, Նարեկացու անվան հայագիտության կենտրոնի պրոֆեսոր Պիտեր Քաուին, միջազգային հարաբերությունների դոկտոր, Հնդկաստանում Հայաստանի առաջին դեսպան Արմեն Բայբուրդյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական Ռուբեն Սաֆրաստյանը, Հայաստանում Հնդկաստանի նախկին դեսպան Ռինա Պանդեյը եւ այլք:

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երեկ ՀՀ ԱԺ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ Խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը Ազգային Ժողովում ընդունել են Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անն Լույոյին եւ Ֆրանսիայի ԱԳՆ Հարավային Կովկասի հարցերի պատասխանատու Նիկոլա Կարգեսին: Այս առնչությամբ Կոնջորյանը իր սոցիալական ցանցի էջում գրել է. «Քննարկել ենք Հայաստանի ժողովրդավարական զարգացման օրակարգը եւ կարեւորել խորհրդարանի ու խորհրդարանական աշխատանքների դերը ժողովրդավարության ամրապնդման եւ զարգացման գործում: Վերահաստատել ենք մեր հանձնառությունը՝ որպես խորհրդարանական մեծամասնություն, Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների շարունակականության եւ Պառլամենտի դերի բարձրացման հարցում»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՉԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ

44-օրյա պատերազմում զոհված զինծառայող Ժորա Սահակյանի հայրը՝ Վահիկ Սահակյանը, անդրադառնալով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ ՀՀ ֆինչական կոմիտեի՝ զինվորական ֆինչական գլխավոր վարչության՝ հատկապես կարեւոր գործերի ֆինության վարչությունում հարցաֆինությանը, նշեց, որ ինքը չի հավատում, որ իրականում Նիկոլ Փաշինյանը հարցաֆինվել է:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը անձամբ չի գնացել Քննչական կոմիտե՝ 44 օրյա պատերազմի առիթով հարուցված քրեական վարույթով հարցաքննության. ՀՀ քննչական կոմիտեի քննիչներն են գնացել Վարչապետի մոտ՝ նրան հարցաքննելու:

«Ժողովուրդ» օրաթերթն իր այս տեղեկությունը փորձեց պարզել հենց Քննչական կոմիտեից, որտեղից ի պատասխան հաղորդեցին. «Հայտնում ենք, որ 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9 ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար մի խումբ անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորությունները չարաշահելու ենթադրյալ հանցագործության դեպքի առթիվ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված քրեական վարույթի նախաքննությունը 2022 թվականի մայիսի 4-ից շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի՝ զինվորական քննչական գլխավոր վարչության՝ հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում:

Սույն քրեական վարույթի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը հարցաքննվել է վկայի դատավարական կարգավիճակով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված բոլոր պահանջների պահպանմամբ»:

Նշենք, որ «Ազատության» հարցմանն ի պատասխան՝ Քննչական կոմիտեից հայտնել էին, որ կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության՝ հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում վարչապետ Փաշինյանը որպես վկա է հարցաքննվել:

Նկատենք, որ 2020թ. հունվարի 25-ին՝ Կապանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ (այն ժամանակ, ի դեպ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը չէր խուսափում լրագրողների հետ ուղիղ շփումներից), մեծախոսում էր, թե ինքն այնքան հասանելի է, որ Հատուկ քննչական ծառայությունից հրավեր է ստացել ու վեր է կացել, գնացել հարցաքննության: «Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի գործող ղեկավարը Քննչական կոմիտեի հրավերով ներկայացել է նախաքննության մարմնի գրասենյակ եւ քննիչի աշխատասենյակում հարցաքննվել:

Ի դեպ, ինձ երեկ էլ հրավիրել են ՀՔԾ, եւ հարցաքննվել եմ նաեւ այնտեղ»,- ասում էր Փաշինյանը: Այսօր, սակայն, իր իսկ բառերով ասած՝ իրավիճակ է փոխվել, եւ արդեն քննիչներն են գնում վարչապետի մոտ՝ հարցաքննելու»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

ՀՀ ֆինչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ֆինչական վարչությունում իրականացված մեծածավալ ֆինչական եւ այլ դատավարական գործողությունների արդյունքում բացահայտվել է երեք տասնյակից ավել գողության, գողության փորձի, խարդախության դեպքեր: Մեկ անձի մասով նախաքննությունն ավարտվել է:

Քննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ Երեւան քաղաքի 26-ամյա բնակիչը, երկու անչափահաս եղբայրներին ներգրավելով հանցագործության կատարման մեջ, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ համաձայնության գալով, 2021 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում, տեխնիկական միջոցների գործադրմամբ, մուտք են գործել նույն մարզի վարչական տարածքում գտվող հանգստյան գոտիների տնակներ, խանութներ, բնակարաններ եւ կատարել հափշտակություններ՝ քաղաքացիներին պատճառելով տարբեր չափերով գույքային վնաս:

Պարզվել է նաեւ, որ նույն անձինք, հափշտակություն կատարելու նպատակով, մուտք են գործել ՀՀ այլ մարզերում եւ Երեւանում գտնվող բնակարաններ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չեն կարողացել հասցնել: Բացի այդ, նշված 26-ամյա երիտասարդը, հայտարարությունների հարթակում տեսնելով ավտոմեքենաների վաճառքի վերաբերյալ հայտարարություններ, ինչպես միայնակ, այնպես էլ խմբի կազմում, մեկը մյուսի գործողությունները լրացնելով, կատարել են անձնագրի կեղծում եւ ավտոմեքենաների սեփականատերերին կեղծ խոստումներ տալով, կեղծ անձնագրի տվյալներով պարտավորագիր ներկայացնելով, խարդախությամբ հափշտակել են ավտոմեքենաները, վաճառել եւ գումարը բաժանել միմյանց միջեւ:

Հիշյալ երիտասարդը, 2019-2021թթ. ընթացքում, համաձայնության գալով իր ընկերների հետ, տարբեր մարզերում մուտք է գործել ավտոտեխսպասարկման, մետաղների ընդունման կետեր, ինչպես նաեւ բնակարաններ, եւ կատարել գաղտնի հափշտակություններ: Որոշ դեպքերում էլ հանցագործությունն իրենց կամքից անկախ հանգամանքներով չկարողանալով ավարտին հասցնել՝ հեռացել են:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 26-ամյա երիտասարդի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (9 դրվագ), 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ եւ 4-րդ կետերով (2 դրվագ), 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (10 դրվագ), 238-րդ հոդվածի 1-ին մասով (7 դրվագ), 238-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (12 դրվագ), 255-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 457-րդ հոդվածի 2-րդ մասով, 44-254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (7 դրվագ) եւ 44-254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (3 դրվագ): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, նրա մասով նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Նշված քրեական վարույթի շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավված եւս 8 անձի մասով նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՄԱՐ Է ՀԱՓՇՏԱԿԵԼ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթով հիմնավորվել է, որ Ռ. Ս.-ն, զբաղեցնելով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի օգնականի պաշտոնը, խարդախությամբ պաշտոնեական դիրքն օգտագործելով դատապարտյալից գումար է հափշտակել:

Մասնավորապես՝ պարզվել է, որ Ռ. Ս.-ն ծանոթություն է հաստատել Դիլիջան քաղաքի բնակիչ Ս. Հ.-ի հետ, որը Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 8-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք կատարելու մեջ եւ դատապարտվել ազատազրկման: Դրանից հետո՝ 2017 թվականի հունիսի 21-ին, դատապարտյալի պաշտպանը դիմում է մուտքագրել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Ս. Հ.-ի նկատմամբ նշանակված ազատազրկման ձեւով պատժատեսակը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ:

Դատավորի օգնական Ռ. Ս.-ն, տեղեկացված լինելով վերը նշված դիմումի մասին եւ նպատակ ունենալով դատապարտյալից խարդախությամբ գումար հափշտակել, Ս. Հ.-ին հայտնել է, որ որպես պատժատեսակ նշանակված ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու համար անհրաժեշտ է 300.000 ՀՀ դրամի պետական վճարում կատարել, մինչդեռ օրենքով որեւէ նման վճարում սահմանված չի եղել:

Արդյունքում՝ Ռ. Ս.-ն Վանաձոր քաղաքում հանդիպել է դատապարտյալ Ս. Հ.-ի հետ եւ նրանից ստացել 300.000 ՀՀ դրամ գումարը:

Քննության առնելով Ս. Հ.-ի պաշտպանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել հիշյալ դիմումն ըստ ընդդատության ուղարկելու վերաբերյալ, որից հետո դատապարտյալ Ս. Հ.-ի պահանջով Ռ. Ս.-ն հիշյալ գումարը վերադարձել է նրան:

Ռ. Ս.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցավոր արարքի կատարման համար:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԿԻՆԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Նոյեմբերի 17-ին, ժամը 18:40-ին, «Լադա» մակնիշի մեքենայի վարորդը Երեւանի Խորենացու փողոցում վրաերթի էր ենթարկել 80-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց: Նոյեմբերի 24-ին՝ ժամը 07:54-ին, հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ 80-ամյա Սվետլանա Այդինյանը մահացել է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 76 դեպք, որից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Ազգային ժողովը դեկտեմբերի 2-ին արտահերթ նիստ կգումարի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ արտահերթ նիստի նախաձեռնողն ընդդիմությունն է՝ «Հայաստան» խմբակցությունը: Տեղեկացանք, որ նիստը հրավիրվում է Ադրբեջանի խորհրդարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ի հայտարարությունը քննության առնելու ու դրան համարժեք Հայաստանի անունից հայատարարություն ընդունելու համար: Իսկ Ադրբեջանի խորհրդարանը՝Միլի Մեջլիսը, հայկական կողմին կոչ է արել ճիշտ գնահատել ստեղծված պատմական հնարավորությունն ու «Խաղաղության պայմանագրի» համար ընդունելի համար պաշտոնական Բաքվի կողմից տրամադրված հինգ կետերը: «Հայաստան» խմբակցությունն առաջարկում է Ադրբեջանին պատասխանել մոտավորապես հետեւյալ բովանդակությամբ պատասխանով: «Ադրբեջանը պարտավոր է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման շրջանակներում անվերապահորեն կատարել ստանձնած պարտավորությունները, վերջ տալ հայատյացությանը, ռազմական հռետորաբանությանը, բացառել ուժի կիրառումը, ուժի կիրառման սպառնալիքը, ինչպես նաեւ շանտաժի եւ ճնշումների միջոցով ցանկալի համաձայնագրերին հասնելու քաղաքականությունը: Ադրբեջանական կողմը պարտավոր է իր զինված ուժերն անհապաղ վերադարձնել մինչեւ 2021թ. մայիսի 12-ը զբաղեցրած բնագծերը»: Ի դեպ, դեռ հարց է, թե իրականում ԱԺ մեծամասնությունը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը, խորհրդարանում բավարար քվորում կապահովի՞ նիստը մեկնարկելու ու հարցը քննարկելու համար:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՐՍՈՒՄ

Լարսի անցակետը հատել փորձող որոշ բեռնատարներ, որ նոյեմբերի սկզբից Վրաստանի տարածքում են՝ Թբիլիսիի շրջանցիկ ճանապարհի մոտ, այս օրերին նոր միայն կարողացել են անցնել շրջանցիկ այդ ճանապարհը: Բայց, ցավոք, դրանից որեւէ բան չի փոխվել, ու դա չի էլ նշանակում, թե բեռնատարներն առաջիկա օրերին կամ շաբաթներին կարողանալու են հատել ռուս-վրացական սահմանը: ArmLur.am-ի հետ զրույցում այս պահին դեպի Լարսի անցակետ ճանապարհի մասին մանրամասներ է հայտնում Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը:

Պատգամավոր Դանիելյանը զարմանում է՝ ինչպես կարելի էր առիթը չօգտագործել ու ՀԱՊԿ գագաթնաժողովի շրջանակներում Հայաստան այցելած ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հարցն առանձին չքննարկել: «Հայաստան» խմբակցության պատգամավորը շեշտում է՝ հարցը մոտ մեկ ամսից ավելի է, ինչ ամենատարբեր հարթակներում բարձրաձայնում է, բայց առ այսօր դրական որեւէ տեղաշարժ չկա: Մեր զրուցակիցն արձանագրում է՝ իրավիճակի հետ կապված պարենային շուկայում արդեն իսկ թանկացումներ են նկատվում, արտահանող ընկերությունների մոտ՝ սնանկության դեպքեր: Տնտեսվարողները, հավելում է, աճեցրած ու ստացած բերքը ռեալիզացնել չեն կարողանում, ինչը գյուղատնտեսության ոլորտի իրական աղետներից է: Արտահանող խոշոր կազմակերպություններից մեկը Facebook-ի իր էջում գրել է, որ նոյեմբերի 20-ի դրությամբ, պայմանավորված Լարսի անցակետի խիստ ցածր թողունակությամբ, ավելի քան 1 մլրդ դրամի վնաս է կրել: Մասնավոր ընկերությունը տեղեկացրել է նաեւ, որ միայն իր՝ խցանման մեջ մնացած բեռնատարները թվով 150-ն են: Իսկ ընդհանուր առմամբ, նորից ընկերության տեղեկացմամբ, հայկական բեռնատարների թիվն այս պահին ավելի քան 3.000-ի է հասնում:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՀԻՅԱՆ

ՊԱՇՏՈՆՅԱ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՄԵԾ ՄԱՍԸ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ Է

«Մի կողմից մենք ուզում ենք՝ կանայք ավելի շատ ներգրավվեն աշխատաշուկայում, որովհետեւ ունեն ավելի լավ մարդկային կապիտալ, մյուս կողմից ուզում ենք՝ կանայք ավելի շատ երեխաներ ունենան, քանի որ դա պետության առաջընթացի ու ռազմավարական կարևորություն ունի, ուզում ենք կանայք ներգրավվեն բանակում, տնտեսության մեջ, քաղաքականության մեջ: Այս մասին, այսօր՝ նոյեմբերի 25-ին, «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ»-ին նվիրված համաժողովի ժամանակ ասաց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության խորհրդական Վիկտորյա Այդինյանը:



«Ու այնպես է ստացվում, որ պետության խնդիրների ահռելի մասը դնում ենք կանանց ուսերին՝ առանց ստեղծելու դրա համար անհրաժեշտ համակարգային պայմաններ: Ուստի պետք է հասկանալ, թե ինչպես է հնարավոր այս տարբեր նպատակները միմյանց հետ համատեղել այնպես, որ կինն ընտրություն կատարելու հնարավորություն ունենա եւ ցանկության դեպքում հնարավորություն ունենա համատեղելու անձնական կյանքը, աշխատանքը, ընտանիքը, հետաքրքրությունները եւ այլն»,- ասաց նա:

Վիկտորյա Այդինյանը տեղեկացրեց, որ վերջերս մշակել են աշխատանքի ու սոցիալական պաշտպանության ռազմավարությունը, որը ներկայացրել են հանրային քննարկման, որից հետո փոփոխություններ են կատարել:

«Այդտեղ ահռելի բլոկ հատկացված է կանանց տնտեսական զարգացմանը, բռնության դեմ պայքարին, կանխարգելմանը եւ այլն: Հուսով ենք՝ օրերս ռազմավարությունը կընդունվի կառավարության կողմից ու կդառնա ուղղորդիչ փաստաթուղթ»,- ասաց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության խորհրդականը:

Նա նշեց, որ զուգահեռաբար մշակում են զբաղվածության ռազմավարություն, որտեղ հենց կանանց տնտեսական զորեղացումն ու ներգրավումն աշխատաշուկայում դիտարկում են իբրեւ ֆինանսական կայունության, ֆինանսական անկախության կարեւորագույն գործոն, որը հենց ամենաառանցքային պայմաններից է բռնության դեմ պայքարելու համար:

«Կանանց տնտեսական զորեղացումն ու ֆինանսական կայունությունը մենք չենք դիտարկում միայն անձի տեսանկյունից: Այլեւս դա կարեւորագույն նախապայման է առհասարակ հասարակության, տնտեսության զարգացման համար: Ինչո՞ւ, որովհետեւ կանայք ունեն ավելի լավ մարդկային կապիտալ, մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում՝ քոլեջներ, բուհեր, կանայք ավելի մեծ տոկոս են կազմում ու կանայք ընդգրկված են տնտեսության այն ճյուղերում, որոնք ունեն ավելի բարձր արտադրողականություն, այսինքն կանայք ավելի ուսյալ են, ավելի բարձր արտադրողականությամբ են աշխատում տնտեսության ճյուղերում»,- ասաց Վիկտորյա Այդինյանը:

Նա հայտարարեց, որ կանանց աշխատանքային ռեսուրսների, այսինքն 15-ից բարձր տարիքի կանանց միայն 38 տոկոսն է զբաղված. «Դա նշանակում է, որ կանանց շուրջ 62 տոկոսը կամ գործազուրկ է կամ չի աշխատում ու չի փնտրում աշխատանք, չի ուզում փնտրել աշխատանք: Գործոնները, իհարկե, տարբեր են՝ սկսած համակարգային, մշակութային խնդիրներից, կարծրատիպերից մինչեւ, օրինակ, երեխայի կամ ընտանիքի անդամի խնամքի համար պայմանների բացակայությունը: Հենց սրանց է միտված զբաղվածության ռազմավարությունը, որը փորձում է ոչ միայն կարճաժամկետ ծրագրերի միջոցով անդրադառնալ ու հասցեագրել այս խնդիրները, այլ ավելի համակարգաստեղծ ինստիտուտներ ստեղծելով պայքարել նաեւ առկա մշակութային խնդիրների ու կարծրատիպերի դեմ»,- ասաց նա:

Այդինյանը խոսեց մի ծրագրի մասին, որը միտված է մարզաբնակ կանանց, խոցելի խմբերի կարողությունների զարգացմանը բարձր արտադրողականություն ունեցող ոլորտներում. «Մոտ օրերս մենք մարզաբնակ ընտանեկան բռնության ենթարկված, նպաստի համակարգում գտնվող, գործազուրկ, միայնակ մայր եւ նման խմբերում ընդգրկված կնանց համար կառաջարկենք թվային մարկետինգի դասընթացներ, հետագայում նաեւ աշխատանքի անցնելու հնարավորությամբ»,-ասաց նա:

Վիկտորյա Այդինյանի ներկայացմամբ, Հայաստանում մեծ թիվ են կազմում 15-29 տարեկան երիտասարդները, ովքեր չեն աշխատում ու չեն սովորում. «Փաստացի, այդ երիտասարդների մոտ 80 տոկոսը բնակվում է մարզերում: Իսկ 15-29 տարեկան կանանց շուրջ 40 տոկոսն ընկնում է այս կատերագորիայի մեջ՝ կամ չեն աշխատում, կամ չեն սովորում: Բնական է, որ զբաղված են երեխայի կամ ընտանիքի անդամի խնամքով: Սա է պատճառը, որ պետք է թիրախավորենք նաեւ ընտանիքի անդամի, երեխայի խնամքի նոր հաստատությունների ստեղծումը»,- ասաց Վիկտորյա Այդինյանը:

Նա կարեւորեց մանկապարտեզների թիվն ավելացնելու հարցը. «Բայց դրանից բացի շատ կարեւոր է նաեւ օրենսդրական փոփոխություններ իրականացնելը, որովհետեւ երեխայի խնամքը միայն կնոջ պարտականությունը չէ: Պետք է իրավական մեխանիզմներ ստեղծել, որ հայրը նույնպես ներգրավված լինի երեխայի խնամքում:

Հաջորդը, մենք թիրախավորելու ենք 30-40 տարեկան կանանց, որովհետեւ սա այն տարիքն է, երբ կինը երեխայի խնամքից հետո փորձում է վերադառնալ աշխատաշուկա: Սակայն երեխայի խնամքի վրա ծախսած 2-3 տարիները իրենց ազդեցություն են ունենում կնոջ հմտությունների, կարողությունների վրա: Դրա համար այդ տարիքի կանանց համար առավել թիրախավորված փափուկ կարողությունների զարգացման ծրագրեր ենք առաջարկելու»,-ասաց նա:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

ԳՈՒՅՔ՝ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻՆ

ՀՀ կառավարությունը նոյեմբերի 24-ի նիստում հավանության է արժանացրել մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին եւ այլ հասարակական կազմակերպություններին անհատույց սեփականության իրավունքով գույք տրամադրելու վերաբերյալ որոշման նախագիծը, որը մշակել է ԿԳՄՍ նախարարությունը:

ԿԳՄՍՆ-ից Armlur.am-ին հայտնում են, որ որոշմամբ հաստատվել է 2022 թվականին ձեռք բերվող գույքի բաշխման ցանկը՝ ըստ ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձեւերի ազգային ֆեդերացիաների եւ այլ հասարակական կազմակերպությունների: Նախատեսվում է ՀՀ պետական բյուջեում ծախսերի ավելացում՝ 280 մլն 632 հազար դրամի չափով:

Հաշվի առնելով, որ մարզական կազմակերպություններում առկա մարզական գույքը հնանում եւ մաշվում է, մարզական գույքի զգալի մասն արագամաշ գույք է, իսկ որոշ մասը նույնիսկ մեկանգամյա օգտագործման է, ուստի անհրաժեշտություն է առաջանում յուրաքանչյուր տարի շարունակական իրականացնելու ծրագիրը:

Ներկայում հանրապետության մարզադպրոցներից, մարզաձեւերի ֆեդերացիաներից եւ մարզական հասարակական կազմակերպություններից ստացվել է 2 մլրդ 7 մլն 245 հազար դրամ արժողությամբ գույքի պահանջարկ: Բաշխման ցանկը կազմվել է՝հաշվի առնելով առաջնահերթությունները՝ կազմակերպություններում պարապողների թիվը, մարզական արդյունքները, աշխարհագրությունը եւ այլն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝արդեն իսկ իրականացվել է նախատեսված մարզական գույքի գնման գործընթացը:

Որոշման արդյունքում ակնկալվում է հանրապետության մարզական կազմակերպությունների՝ անկախ գերատեսչական պատկանելությունից, ամրապնդված նյութատեխնիկական բազաների եւ ժամանակակից մարզագույքով հագեցված մարզակառույցների առկայություն, ինչպես նաեւ մարզման բարելավված պայմաններ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ՃՏՊ. 31 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ

«Ակբա» բանկը միացել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած «Մենք ստեղծում ենք կենսունակ համայնքներ» խորագրով հեռուստամարաթոնին:

Բանկը Հայաստանում տարբեր կարեւոր ծրագրերի իրականացման համար հիմնադրամին հավելյալ 2 միլիոն դրամ է տրամադրել:

2021-ի սկզբից առ այսօր Ակբա բանկը Visa «ԲԱՐԵՐԱՐ» ծրագրի շրջանակում «Հայաստան» համահայկական հիմնադրամին է տրամադրել 153.167.879 ՀՀ դրամ,որից 62.557.000ՀՀ դրամը տրամադրվել է 2021 թվականին, իսկ 90.610.879 ՀՀ դրամը՝ 2022 թվականին: Որպես առանձին աջակցություն «Հայաստան» համահայկական հիմնադրամինտրամադրվել է92.576.000 ՀՀ դրամ, որից՝

- 16.831.000 ՀՀ դրամը տրամադրել են բանկի աշխատակիցները՝ «Մենք ենք Մեր սահմանները» ծրագրի շրջանակում,
- 25.745.000 ՀՀ դրամը բանկի աշխատակիցների կողմից տրամադրվել է սոցիալական փաթեթի շրջանակում,
- 50.000.000 ՀՀ դրամ բանկը տրամադրել է միանվագաջակցություն:

Բանկի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի համատեղ թողարկած Visa «ԲԱՐԵՐԱՐ» քարտերի միջոցով կատարված գործառնությունների 0.1%-ը, ինչպես նաեւ քարտատեսակի տարեկան սպասարկման վճարների 50%-ը բանկը տրամադրում է «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Այս տարվա 10 ամիսների արդյունքներով տնտեսական ակտիվության ցուցանիշը 14,5 տոկոս, իսկ հոկտեմբերին՝նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ՝17,5 տոկոս:

Վիճակագրության պետական կոմիտեի տվյալներով, այս տարվա 10 ամիսների տվյալներով առեւտուրն աճել է 15,5 տոկոսով (միայն հոկտեմբերին՝23,1 տոկոսով), շինարարությունը՝14,4 տոկոսով (միայն հոկտեմբերին՝ 15,1 տոկոսով), ծառայությունների ոլորտը 27,9 տոկոսով (միայն հոկտեմբերին՝34,9 տոկոսով), արդյունաբերությունը՝9,9 տոկոսով (միայն հոկտեմբերին՝9.7 տոկոսով):

Հունվար-հոկտեմբերի տվյալներով գնաճը կազմել է 8,7 տոկոս, իսկ հոկտեմբերը՝ հոկտեմբերի համեմատ՝ 9,5 տոկոս:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 10 ամիսներին աճել է 66,4 տոկոսով, իսկ հոկտեմբերը՝ հոկտեմբերի համեմատ՝91 տոկոսով:

Արտահանումը 10 ամիսների տվյալներով աճել է 71,4 տոկոսով (հոկտեմբերին՝24,8 տոկոսով), իսկ ներմուծումն աճել է 63,5 տոկոսով (հոկտեմբերին՝ 74,4 տոկոսով):

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՋԻՆՎՈՐԻՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ Է ԵՂԵԼ

Հայաստան այցից առաջ աշխարհահռչակ դիրիժոր, հայ ժողովրդի բարեկամ Վլադիմիր Սպիվակովը ողջույնի խոսք է հղել իր հայ հանդիսատեսին. «Թանկագին ընկերներ, Հայաստանը վաղուց ինձ համար դարձել է հարազատ տուն: Ես բազմիցս եկել եմ որպես մենակատար և դիրիժոր՝ «Մոսկվայի Վիրտուոզների» եւ Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Իմ ընտանիքը միշտ եղել է ձեզ հետ՝ եւ՛ տխրության, եւ՛ ուրախության պահերին: Վերջին տարիներին Հայաստանը դժվար ժամանակներ է ապրում: Ձեր ցավն արտացոլվում է նաև ի՛մ սրտում, այդ իսկ պատճառով ինձ համար կարևոր է աջակցել ձեզ այն ամենով, ինչով կարող եմ: Մենք հանդես կգանք երեք համերգով. Երկուսը՝ Երեւանում եւ մեկը՝ ինձ համար շատ նշանակալի քաղաքում՝ Գյումրիում: Այս երեք համերգներից առաջինը «Զինվորի տանը» բուժվող և կյանք վերադարձող վիրավոր զինվորների համար է:

Այն տղաները, ովքեր ի վիճակի կլինեն գալ համերգի, կդառնան համերգի ունկնդիրներ, որի ծրագիրը կազմված է հատուկ իրենց համար, իսկ դահլիճի մնացած տեղերը կվաճառվեն: Տոմսերի վաճառքից ստացված հասույթը կփոխանցվի Զինվորի տուն:

Կան ուղեկիցներ եւ կան ընկերներ: Մենք ընկերներ ենք: Այդպես եղել է եւ այդպես կլինի միշտ: Ձեր Վլադիմիր Սպիվակով»:

Վլադիմիր Սպիվակովի համերգով, նոյեմբերի 27-ին կմեկնարկի «Զինվորի տան» նոր՝ «Armenia 301» նախագիծը, որի խորհուրդը միասնականությունն է եւ համայն հայության համախմբումը մեկ գաղափարի շուրջ՝Զինվորի տան շուրջ, որպեսզի կարողանանք շարունակել օգնել, աջակցել, բարեկեցիկ կյանք ու ապագա ապահովել հայրենիքի պաշտպանության ժամանակ վիրավորում ստացած անձանց: «Armenia 301» նախագծի հիմքը Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավն է՝ստեղծագործություն, որ 100 տարի առաջ դարձավ հույսի, հավատի, արեւշատության ու միասնականության խորհրդանիշ եւ ուղերձ՝դժվարությունների մեջ հայտնված մեր ժողովրդի համար:

ԵՊԲՀ ռեկտոր եւ «Զինվորի տան» համահիմնադիր Արմեն Մուրադյանն իր երախտիքի խոսքն է հայտնում հայ ժողովրդիմեծ բարեկամ Վլադիմիր Սպիվակովին՝կրկին հայ ժողովրդի եւ այս անգամ՝ «Զինվորի տան» կողքին կանգնելու համար: « «Զինվորի տան», բոլոր զինվորների, անձամբ իմ եւ Հայկուհի Մինասյանի անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել մաեստրո Սպիվակովին՝ մարդասիրական նման գեղեցիկ քայլի համար: Կանգնել հայ զինվորի կողքին, սատար լինել նման աստվածահաճո գործի, նշանակում է՝ ոչ միայն հայ ժողովրդի մեծ բարեկամը լինել, այլեւ իսկապես՝ մեծ հումանիստ: Պատահական չէ, որ հենց այս բարեգործական համերգով ենք տալիս «Զինվորի տան» «Armenia 301» ծրագրի մեկնարկը: Սա մի ծրագիր է, որ նպատակ ունի «Զինվորի տան» շուրջ, այսինքն ի նպաստ զինվորի առողջության եւ բարօրության կատարվող գործի շուրջ համախմբել համայն հայությանն ու հայ ժողովրդի բարեկամներին: Ուրեմն, ի գործ՝ ի նպաստ հայրենիքի պաշտպանների»,-ասում է Արմեն Մուրադյանը:

«Զինվորի տանը» նվիրված բարեգործական համերգի էքսկլյուզիվ հովանավորն է «Արդշինբանկը»: Բանկի վարչության նախագահ Արտակ Անանյանը, հիշատակելով «Զինվորի տան» հետ արդեն մի քանի տարվա վաղեմության ծրագրերը, կարեւորում է գործակցության շարունակությունը: «Սա մեծ սոցիալական ծրագիր է, որին մենք շարունակաբար աջակցում ենք: Այսօրվա միջոցառումը բանկի եւս մեկ ներդրումն է վերականգնողական կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում: Մեր մեծ երախտագիտությունն ենք հայտնում մաեստրո Սպիվակովին, ով իր գործունեությամբ արդեն երկար տարիներ սատարում է հայ ժողովրդին»,-նշում է Արտակ Անանյանը:

Զինվորի տունն առաջարկում է համայն հայությանն ու հայ ժողովրդի բարեկամներին համախմբվել Սարյանի կտավի շուրջ, միասնաբար «ստեղծել» կտավի կրկնօրինակը՝ այդպիսով մասնակից դառնալով հայրենիքի պաշտպանների բարեկեցիկ ապագայի կառուցման գործին:

Այս համերգի ընթացքում Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ կհնչեն Պյոտր Չայկովսկիի, Արամ Խաչատրյանի, Ջոակինո Ռոսինիի, Վինչենցո Բելլինիի, Ջակոմո Պուչչինիի, Էռնեստո դե Կուրտիսի ստեղծագործություններ: Որպես մենակատար նվագախմբի հետ հանդես կգա հայազգի հանրահայտ մեներգչուհի, «Բոլշոյ» թատրոնի մենակատար Աննա Ագլատովան: Համերգի տոմսերից ստացված ողջ հասույթը կփոխանցվի «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնին:

Նոյեմբերի 28-ի համերգի էքսկլուզիվ հովանավորէ հանդիսանում ԳեոՊրոՄայնինգընկերությունը: Ունկնդրին կներկայացվեն ռուս կոմպոզիտորներ Ս. Ռախմանինովի Դաշնամուրի թիվ 2 կոնցերտը եւ Պ. Չայկովսկու Թիվ 5 սիմֆոնիան, մենակատար՝միջազգային մրցույթների դափնեկիր Ալեքսանդր Կլյուչկո (դաշնամուր): Այս ստեղծագործությունները համաշխարհային երաժշտարվեստի ամենատպավորիչ գործերից են: ԳեոՊրոՄայնինգ ընկերության Հայաստանում պաշտոնական ներկայացուցիչ Ռուզաննա Գրիգորյանի խոսքով, այս նախագիծը իր մեջ ունի մեծ գթասրտության սիմվոլ. «Մեզ համար մեծ պատիվ է դառնալ մշակութային ծրագրի գործընկեր, որն ունի խորը հումանիտար եւ սոցիալական նշանակություն: Մշակույթն անհնար է առանց գթասրտության, քանզի գթասրտությունը մշակույթի մաս է: Հնչում է Չայկովսկի, Ռախմանինով՝ երաժշտության եւ մշակույթի միջազգային լեզուն: Մենք հաճախ ենք ասում, որ մշակույթը մեր ամենամրցունակ ոլորտն է, որը կարող է մեզ հասցնել համաշխարհային մակարդակի: Հենց նման հանդիպումներն են ծառայում երկրի պատվին, կամուրջ են դառնում դեպի համաշխարհային մեծ խաչմերուկ՝ այնտեղ, որտեղ կա փոխազդեցություն եւ որ ամենակարեւորն է՝ փոխըմբռնում: Ընդհանրապես դասական երաժշտության մասսայականացմանը նպաստելը մեծ ու կարեւոր ներդրում է ազգի քաղաքակրթական կոդի զարգացման գործում»:

Վլադիմիր Սպիվակովի այցը Հայաստան առանց Գյումրի այցելելու դարձել է արդեն անհնար: Չէ՞ որ դեռ հեռավոր 1989թ. գալով Գյումրի (այն ժամանակ դեռ Լենինական), նա խոստացավ, որ կվերադառնա եւ պահում է իր խոստումը մինչ օրս: Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, նոյեմբերի 29-ին կայանալիք համերգին կհնչեն հատվածներ Պյոտր Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայից , «Կարապի լիճը» եւ «Մարդուկ-Ջարդուկը» բալետներից, Արամ Խաչատրյանի Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի երաժշտությունից սյուիտը:

Այս երաժշտական հրավառությունը հնարավոր դարձավ «Արվեստ23»-ի եւ ՌԱՖՆ բարեգործական հիմնադրամի ջանքերով: Իսկ Գյումրու համերգի կազմակերպիչն է Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական ընկերությունը:

Տոմսերը կարող եք ձեռք բերել Tomsarkgh.am-ի միջոցով եւ Արամ Խաչատրյան համերգասրահի տոմսարկղում:

ԱՆՁԻՆ ՎՃԱՐՎԵԼ Է ՉՎՃԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Քաղաքացին դիմել է Պաշտպանին՝ խնդրելով աջակցել ստանալ չվճարված աշխատավարձը: Տեղեկացրել է, որ աշխատում է մասնավոր կազմակերպությունում՝ որպես մաքրուհի և վարձատրություն ստանում է օրական աշխատանքային օրվա ավարտի վերջում: Գործատուի պահանջով ներկայացել է նաև աշխատանքի մեկ այլ աշխատակցի փոխարինելու համար, սակայն աշխատանքային ժամի ավարտից հետո գործատուն հրաժարվել է վճարել նախատեսված աշխատավարձը՝ առանց հիմնավոր պատճառաբանության:

Քաղաքացու դիմումից հետո Պաշտպանի աշխատակազմը կապ է հաստատել գործատուի հետ պարզաբանում ստանալու նպատակով եւ տեղեկացել, որ գործատուն հրաժարվել է աշխատավարձ վճարել, քանի որ դեռեւս աշխատավարձի վճարման օրը չէ, այնուհետեւ հավելել, որ աշխատողը թույլ է տվել խախտում, ուստի աշխատավարձից կատարել է պահումներ:

Պաշտպանի աշխատակազմը գործատուից պահանջել է աշխատանքային պայմանագրի օրինակի պատճենը եւ աշխատավարձից պահումներ կատարելու իրավական հիմքերը:

Գործատուն հրաժարվել է ներկայացնել՝ պատճառաբանելով, որ աշխատանքային պայմանագիրը բացակայում է: Արձանագրվել է գործատուի կողմից ակնհայտ ոչ իրավաչափ գործողությունները, ուստի պահանջվել է խախտումների վերացում:

Բողոք ներկայացրած անձը հետադարձ կապի միջոցով տեղեկացրել է, որ գործատուն իրեն հրավիրել է աշխատավայր, այնուհետեւ վճարել չվճարված աշխատավարձը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԵՂՈՒՄՆԵՐ

10 ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔ՝ ՄԵԾԱՄՈՐՈՒՄ

Գունազարդ սափորներ, կավե կճուճներ, ուլունքներ, վահանակներ, աղակե արվակներ, քանդակներ և մի շարք այլ արժեքավոր ցուցանմուշներ տեղ են գտել «Հին Մեծամոր. հայ-լեհական բացահայտումներ» խորագրով ցուցահանդեսում, որն ամփոփում է Մեծամորի հնավայրում հայ-լեհական արշավախմբի 10-ամյա հնագիտական աշխատանքների արդյունքները:

Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ նոյեմբերի 24-ին Հայաստանի պատմության թանգարանում:

Լուսանկարները՝ Գեւորգ Պերկուպերկյանի.

«Տասը տարվա ընթացքում առաջին անգամ Մեծամորում պեղվում է քաղաքային թաղամաս, որում այնպիսի կառույցների մնացորդներ կան, որոնք թույլ են տալիս վերանայելու մեր մոտեցումները Մեծամորի պատմության, պատմական հաջորդականության ու դերի վերաբերյալ: Միանշանակ է, որ այն մեծ քաղաք է եղել, որ այն Վանի թագավորության Ուրարտուի շրջանում կարեւոր ռազմավարական նշանակություն է ունեցել, որովհետեւ ուրարտացիներն այնտեղ կառուցել են սենյակներ, պալատական համալիր, որը պեղում ենք: Ամենահետաքրքիրն այն է, որ այս հուշարձանն ամենաբարձր խավի ներկայացուցիչների բնակության վայրն է եղել»,-նշեց հայ-լեհական արշավախմբի համաղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը:

Միայն 23-րդ դամբարանից հնագետները 137 կտոր ոսկյա իր են պեղել, փոքր դամբարանից՝ հազարից ավելի անագե ուլունքներ, 20-ից ավելի խեցեղեն, ջնարակված սափորներ:

«Լեհական կողմն օգնում է ուսումնասիրություններ, վերլուծություններ կատարել, որոնք հնարավոր չէ իրականացնել Հայաստանում ֆինանսական միջոցների եւ մասնագետների պակասի պատճառով: Բացի այդ՝ լեհական կողմի շնորհիվ արշավախմբի հնամարդաբանը, հնագետներից երկուսը որակավորում են ստացել Վարշավայի համալսարանում»,-տեղեկացրեց արշավախմբի համաղեկավարն ու հավելեց՝ մեծագույն ձեռքբերում է երիտասարդ հնագետների ներգրավվածությունը պեղումներին, որոնց հետ մեծ հույսեր է կապում:

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանն ուրախությամբ է հյուրընկալում ժամանակավոր ցուցադրությունն ու հիշեցնում, որ այն իրականացվում է Հայաստանում Լեհաստանի դեսպանության, Հայաստանի պատմության թանգարանի, ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ ջանքերով:

Նրա խոսքով՝ համագործակցությունը կարելի է համարել մեկնարկային նման ցուցադրությունների կազմակերպման համար: Պողոսյանը հույս ունի՝ հետագայում նաեւ այլ պատմահնագիտական հուշարձանների նյութեր կներկայացնեն եւ կխրախուսեն մարդկանց այցելել այդ հուշարձաններ, դրանց տարածքներում գործող թանգարաններ, որոնցից է Մեծամորի պատմահնագիտական արգելոց-թանգարանը: Հայաստանում Լեհաստանի դեսպանատան ներկայացուցիչ Մարչին Ռուժիցկին նշեց՝ ցանկացել են հնագիտական արդյունքները ներկայացնող պաստառների, վահանակների ցուցադրություն կազմակերպել, սակայն քննարկումների արդյունքում որոշել են ավելի ծավալուն եւ ընդգրկուն ցուցադրություն կյանքի կոչել: «Հայ-լեհական արշավախմբի համագործակցությունը սկսվել է 2012 թվականին: Մեծամորի պատմահնագիտական արգելոց-թանգարանի հետ Վարշավայի համալսարանը համագործակցության պայմանագիր է ստորագրել, ինչի շնորհիվ արշավախումբը հրաշալի արդյունքներ է գրանցել՝ հնավայրում հազարավոր արժեքավոր ցուցանմուշներ պեղելով»,-ասաց նա եւ հիշեցրեց, որ Լեհաստանում ստեղծվել է մի հարթակ, որի շրջանակում լեհ հնագետները, աշխատելով տարբեր երկրների գործընկերների հետ, բացահայտում են այդ երկրների պատմությունն ու մշակույթը: Ռուժիցկին հայտնեց՝ հաջորդ տարի ցուցադրություն կկազմակերպեն Մեծամորում՝ հանրությանը ներկայացնելով նոր արդյունքներ: «Հին Մեծամոր. հայ-լեհական բացահայտումներ» ցուցահանդեսը բաց կլինի երեք ամիս:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ»

ՌՈԶԱ ԼԻՆԸ ԵՎ ՄԱԼԵՆԱՆ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱՆ ՄԻԱՍԻՆ

Առաջին ալիքը «Մանկական Եվրատեսիլ 2022»-ի միջանկյալ ելույթներից մանրամասներ է հայտնել: Դեկտեմբերի 11-ին Երեւանում կայանալիք շոուի հատուկ հյուրն է Ռոզա Լինը:

Միջանկյալ ակտերից մեկում «Եվրատեսիլ 2022»-ի հայաստանյան պատվիրակը կկատարի համաշխարհային հիթ դարձած «SNAP»-ը: Այն ճանաչվել է «Եվրատեսիլի» պատմության մեջ ամենաշատ լսված 5 երգերից մեկը «Spotify»-ում՝ սահմանելով մի շարք համաշխարհային ռեկորդներ: Երգը ստացել է պլատինե կարգավիճակ եվրոպական մի քանի երկրներում:

«Շատ ուրախ եմ ելույթ ունենալ «Մանկական Եվրատեսիլ 2022»-ում: Ինձ համար չափազանց կարեւոր է, որ մանկական երգի տոնն անցկացվում է իմ հայրենիքում: Երջանիկ եմ վերադառնալ եվրատեսիլյան մեծ ընտանիք»,- նշել է Ռոզա Լինը:

Վերջերս երգչուհին հյուրընկալվել էր նաեւ աշխարհահռչակ «The Late Late Show with James Corden» հաղորդմանը եւ կատարել «SNAP»-ը հայկական մոտիվներով: «Մանկական Եվրատեսիլ»-ի բեմում եւս երգը կհնչի կենդանի կատարմամբ՝ հայկական գործիքներով եւ ազգային երանգներով:

Հանդիսատեսը սպասում է նաեւ «Քամի-քամի» հիթի կատարող Մալենային: Նրա ելույթը եւս նախատեսված է միջանկյալ ակտում. «Մանկական Եվրատեսիլ 2021»-ի հաղթողը ներկայանալու է նոր երգով: «Can't feel anything» երգի երաժշտության հեղինակն է Դավիթ Բադալյանը, տեքստինը՝ Մալենան եւ Ռոզա Լինը: Շուտով տեղի կունենա նա– տեսահոլովակի պրեմիերան:

Հիշեցնենք, որ 20-րդ հոբելյանական «Մանկական Եվրատեսիլին» կմասնակցեն 16 երկրի ներկայացուցիչներ, որոնց կմիավորի «Պտտի՛ր հրաշքը» կախարդական կարգախոսը: Այս տարվա խորհրդանիշը գունազարդ հոլն է: Մասնակից երկրներն են Ալբանիա, Իռլանդիա, Իտալիա, Իսպանիա, Լեհաստան, Հայաստան, Հյուսիսային Մակեդոնիա, Ղազախստան, Մալթա, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Սերբիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն, Վրաստան, Ֆրանսիա:

Տարվա ամենասպասված իրադարձությունը տեղի կունենա դեկտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

ԼՈՒՐԵՐ

ՅՈՒՅԱԴՐԵԼ Է ԶԳԵՍՏԱՊԱՀԱՐԱՆԸ

Երգչուհի Սիրուշոն, ով այս տարի դուստր է ունեցել, իր հետեւորդներին ցուցադրել է դստեր՝ Զաբելի զգեստապահարանը:

Նշենք, որ երգչուհին սկզբունքորեն չի ցուցադրում իր երեխաների դեմքերը: Սիրուշոյի խոսքով՝ այսպես իր երեխաները կարողանում են ազատ հասարակության մեջ դուրս գալ եւ առողջ մանկություն ունենալ: Ինչու չէ նաեւ պատճառը տարբեր քաղաքական խնդիրներից խուսափելու եւ ավելորդ ուշադրություն չգրավելու համար է:

Հավելենք, որ երգչուհին ունի երկու որդի եւ մեկ դուստր:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՄԵՑ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

Ֆուտբոլի Պորտուգալիայի հավաքականը 16 տարում առաջին անգամ աշխարհի առաջնությունը սկսեց հաղթանակով՝3:2 հաշվով առավելության հասնելով Գանայի թիմի նկատմամբ:

Նախորդ անգամ պորտուգալացիներն իրենց մեկնարկային խաղում հաղթել էին 2006թ. աշխարհի առաջնությունում՝ 1:0 հաշվով Անգլիայի թիմին:

2010թ. աշխարհի առաջնությունում պորտուգալացիները 0:0 հաշվով էին ավարտել առաջին խաղը կոտդիվուարցիների հետ: 2014թ. աշխարհի առաջնությունում Պորտուգալիան 0:4 հաշվով պարտվել էր Գերմանիային, որը դարձավ չեմպիոն այդ առաջնությունում: 2018-ին Ռուսաստանում Պորտուգալիան 3:3 հաշվով էր խաղացել իսպանացիների հետ:

Աշխարհի առաջնությունը կավարտվի դեկտեմբերի 18-ին:

ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ Է ՄԱՐԶԻՉԸ

Բրազիլիայի ֆուտբոլի ազգային ընտրանու եւ ֆրանսիական ՊՍԺ-ի հարձակվող Նեյմարը կշարունակի ելույթներն աշխարհի առաջնությունում:

Այս մասին գրում է Reuters-ը՝ մեջբերելով Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Տիտեի խոսքերը. «Մենք վստահ ենք, որ Նեյմարը կշարունակի խաղալ, նա կշարունակի հանդես գալ աշխարհի առաջնությունում: Վստահ եմ, որ նա կհաղթահարի այս ամենը»:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Բրազիլիայի ֆուտբոլի հավաքականի հարձակվող Նեյմարը վնասվածք է ստացել ֆուտբոլի աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին տուրի Սերբիայի հետ խաղում: Հանդիպումն ավարտվել է բրազիլացիների հաղթանակով՝ 2:0 հաշվով: Նեյմարը փոխարինվել է 79-րդ րոպեին:

● *Նոյեմբերի 26-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա ներկայացում՝ «Հինգ պատմություն սիրո մասին»:Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ:Սկիզբը՝19:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպես է կատարվում քրեական գործով վարույթում առարկաների պահպանության ապահովումը:

Լավրենտ Սարուխանյան 68 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Առարկաները պահելիս եւ փոխադրելիս պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի դրանք զերծ մնան կորստից, վնասվելուց, փչանալուց, այլ առարկաների հետ շփվելուց կամ խառնվելուց:Գործն ուղարկելիս ուղեկցող նամակում եւ մեղադրական եզրակացությանը կից տեղեկանքում թվարկվում են քրեական գործին կցված եւ նրա հետ ուղարկվող բոլոր առարկաները, ինչպես նաեւ նշվում են գործին չկցված իրեղեն ապացույցների գտնվելու տեղերը: Իրեղեն ապացույցները դատարան են ուղարկվում փաթեթավորված եւ կնքված վիճակում:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առարկաներն ստանալիս դրանք համեմատվում են ուղեկցող նամակում կամ մեղադրական եզրակացությանը կից տեղեկանքում առկա տվյալների հետ: Անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում դրա մասին կազմվում է արձանագրություն: Փաթեթավորված եւ կնքված իրեղեն ապացույցները բացվում եւ հետազոտվում են միայն դատաքննության ընթացքում:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Որոնք են ծնողների եւ զավակների իրավունքներն ու պարտականությունները:

Մանվել Կարապետյան 29 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծնողների եւ զավակների իրավունքներն ու պարտականությունները (ընդ որում՝ երեխաների ապրուստը հոգալու ծնողների պարտականությունը) որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր: Ծնողների ու զավակների համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում ծնողների եւ զավակների իրավունքներն ու պարտականությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի քաղաքացին է երեխան: Հայցվորի պահանջով ալիմենտային պարտավորությունների եւ ծնողների ու զավակների միջեւ այլ հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել այն պետության օրենսդրությունը, որի տարածքում մշտապես ապրում է երեխան:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Չափահաս զավակների ալիմենտային պարտավորությունները ծնողների օգտին, ինչպես նաեւ ընտանիքի այլ անդամների ալիմենտային պարտավորությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր: Համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում նման պարտավորությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի քաղաքացի է ալիմենտ ստանալուն հավակնող անձը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Մայրաքաղաքի Շիրազի-Մազմանյան-Չաուշի փողոցների-Սիլիկյան խճուղու շրջանաձեւ երթեւեկությամբ խաչմերուկում հետիոտների անվտանգության ապահովման, ինչպես նաեւ ճանապարհային երթեւեկության հոսքերի կարգավորման նկատառումով նոյեմբերի 26-ից գործարկվելու են տրանսպորտային եւ հետիոտնային լուսացույցներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: